



**ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ  
ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՎԱԿԱՆ ԹԵՍԻ  
WESTERN PRELACY  
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA**  
Archbishop Moushegh Mardirossian, Prelate  
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: Prelacy@aol.com



## **ԱՌԱՋՆՈՐԴ ՄՐԲԱՉԱՆԸ ՎԵՐԱՄՈՒՏԻ ԱՌԱԻԾԸ ԲՈԼՈՐԵՑ ԱՉԳ. Վ. ԵՒ Ա. ՇԱՄԼԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԱՇԱԿԵՐՏՈՒԹԵԱՆ ՈՒ ԴԱՏԻԱՐԱԿՆԵՐՈՒՆ ՀԵՏ**

Մեր Ազգային Վարժարանները Զորեքշաբթի, 6 Սեպտեմբերի առաւոտուն Վերաբացին իրենց դուռները, շարժման մէջ դնելով ուսումնական 2007-2008 տարեշրջանը: Վերամուտը կատարուեցաւ աղօթքով ու կարծ արարողութեամբ մը, որուն մասնակցութիւն բերին ծխական շրջաններու հոգեւոր հովիւները:

Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. S. Մուշեղ Ս. Արք. Մարտիրոսեան Վերամուտի առաւոտը բոլորեց Ազգային Վահան եւ Անուշ Շամլեան վարժարանի աշակերտութեան ու դաստիարակներուն հետ: Առաջնորդ Սրբազնին կողքին ներկայ էին Կլենտելի Ս. Աստուածածին Եկեղեցւոյ հոգեւոր հովիւներն Արք. S. Կոմիտաս Զինյ. Թորոսեան եւ S. Արտակ Զինյ. Տեմիրճեան: Ներկայ էին Ազգ. Վարժարաններու Խնամակալ Մարմինի ներկայացուցիչ Տիար ճորճ Զօրպաճեան եւ վարժարանի Ուսումնական Մարմինի ներկայացուցիչ Տիկին Ալին Պապայեան:

Այս առիթով, Առաջնորդ Սրբազնը պատգամ մը ուղղեց աշակերտներուն, վեր առնելով Հայ Դպրոցին ու հայեցի դաստիարակութեան բարիքները, որոնք կը բաշխուին իրենց տնօրենութեան ու դաստիարակներուն կողմէ: Առաջնորդ Սրբազնը յիշեցուց, որ Մեծի Տան Կիլիկիոյ Վեհափառ Հայրապետին՝ Ս.Ս.Օ.Ս.Ս. Արամ Ա. Կաթողիկոսին կողմէ 2007 տարին հօչակուած է Հայ Լեզուի Տարի, հետեւաբար, աև յանձնարարեց ո՛չ միայն յատուկ հանդիսութիւններով ու ձեռնարկներով ընդառաջել Վեհափառ Հայրապետի կոչին, այլ նաեւ տարուան իւրաքանչիւր օրուան հետ վերահաստատել մեր լեզուին, դարաւոր մշակոյթին ու հոգեկան արժեքերուն հանդեպ հաւատարմութեան ուխտը:

Խօսք առին նաեւ վարժարանին տնօրէնը՝ Տիար Վազգեն Մատենլեան, փոխ տնօրէնը՝ Տիկին Ռիթա Գաբրիելեան եւ Ուսումնական Մարմինի ներկայացուցիչը: Յայտնենք, որ Վերամուտը մեր աշակերտութեան հետ բոլորող հոգեւոր հայրերը Առաջնորդ Սրբազնին գրաւոր պատգամը փոխանեցին աշակերտութեան:

## **PRELATE PRESIDES OVER OPENING OF NEW ACADEMIC YEAR AT VAHAN AND ANOUSH CHAMLIAN SCHOOL**

On the morning of Wednesday, September 6, Prelacy schools commenced the 2007-2008 academic year with traditional opening ceremonies and prayers led by our pastors, who also conveyed to the students the Prelate's back to school message.

H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, accompanied by St. Mary's pastors Rev. Gomidas Torossian and Rev. Ardag Demirjian, attended and participated in the opening of Vahan and Anoush Chamlian School. Also in attendance was Board of Regents representative Mr. George Chorbajian, and education committee representative Mrs. Aline Babayan.

On this occasion, the Prelate conveyed his message to the students in which he reminded the students that H.H. Aram I, Catholicos of the Great House of Cilicia, has declared 2007 the Year of the Armenian Language, urging them to coordinate various events to celebrate our language.

Principal Mr. Vazken Madenlian, Vice-Principal Mrs. Rita Kaprielian, and Mrs. Aline Babayan also delivered their remarks to the students.